

իրեն պաշտպան և հովանաւոր Առևսաստանի հետ որ ոլուս
Նականութեան կրթանումն երբէք այնքան սպառնական և հաւ-
անական չի եղել՝ ինչպէս անցած տարի և որ այդ հանգա-
մանքի շնորհիւ արդաւանակ հողէ գտնում կաթոլիկներ և ըողոքական
պրոտաքանդան և մեծ յաջողութեամբ տարածւում, առաջինն՝
—ամեն տեղ, իսկ երկրորդը՝ Քոլդարիայում և Մակեդոնիայում:

ԿԸԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պիոս X պապը մեծ հոգո է տանում եկեղեցական երգեցու-
ղութեան և աշխատում է վերականգնել Գրիգորեան մեղեղիւ-
ները: Նա շըմաքերականով պատուիրել է ամեն տեղ ճշտութեամբ
կատարել այս առթիւ իրեն կազմից եղած կարգագրութիւնն՝
իբրև օրէնք: Վերականգնելով Գրիգորեան եղանակները, պապն
աշխատում է ազատել եկեղեցական երգեցողութիւնը թարու-
նական երգեցողութեան ազգեցութիւնից, որն անցեալ գարու-
ընթացքում մուտք է գործել և տարածուել է ամրող հտաքի-
այում: Նու մտագիր է Գրիգորեան երգեցողութեամբ կատարել
այս տարի հանդիսաւոր պատարագը ու Գրիգորիոս մեծի գերեզ-
մանի մօմ՝ նրա մահուան 1300 ամեակի առթիւ և այս պատ-
ճառով պատժարաններից և հագէտներից յատուկ մասնաժո-
ղով է ընտրուած աւուր պատշաճի հանդէսներ և դասախոսու-
թիւններ կազմակերպելու ու Գրիգորի և նրա գործունէութեան
մասին:

Պիոս պապը նոյն շըմաքերականով յայտարարում է, որ
կաթոլիկ եկեղեցու սովորական լեզուն լատիներէն է և այդ պատ-
ճառով արգելում է եկեղեցական հանդիսաւոր տօներին ուրիշ
օրենք լեզու ով պատարագ մատուցանել կամ բան երգել:

Նոր պապը փոփոխութիւն է մացըել նաև եկեղեցական—
վարչական ձեերի մէջ: Գեկաեմըերի 17-ին նա ոչնչացըել է կար-
գինալների այն խորհուրդը, որը պաշտօն և իրաւունք ունէր
Խտաքիայի համար եպիսկոպոսներ ընտրելու: Նա կարգագրել է,
որ բացի սուրբ տեղերի եպիսկոպոսներից, որոնք ենթակայ են
Պրօպագանգային և եկեղեցու արտաքին գործերի վրայ հոկու-
արտակարգ խորհրդին, մնացածներին ընտրի ու ժողովը, որի
նախագահն ինքը՝ Պիոս X է, որովհետև այս ժողովի մէջ շամփա-
ղանց խիստ է գալունապահութիւնը և նրա գէմ մեղանչողներին
ռւղղակի կարգալոյց են անում:

Պիոս պապը Փետրուարի 5-ին՝ իւր անուանակօչութեան

տարեդարձի առթիւ ընդունեց բոլոր կարգինալներին և առնելով Օքելեա կարգինալ սենեկապետի ձեռքից նրա մատուցած ուղերձը, պատճեց յիշեց վանականներին ֆրանսիայից արտաքսելու մասին և գժոհութիւն յայտնեց՝ թէ այդ և թէ այն վատ վարժունքի համար, որին վերջերս ենթարկուեցին երկու կարգինալներ ֆրանսիայում:

Հոռմից «Neue Fr. Presse» թերթին հազորգում են, որ Օլումուցկի եպիսկոպոս իշխան Կօնի դէմ Պապի հրամանով գատ էր յարուցուած երկու գործի առթիւ, մէկով եպիսկոպոսը մեղադրում էր խոստվանութեան խորհուրդը խախտելու մէջ, իսկ միւս գործը տնտեսական էր (անտեսական քառը խկապէս տերմինէ), որոնցով եպիսկոպոսն ատելի էր դարձել իւր հօտին: Առաջին գործը, որ պապի կողմից յանձնուած էր կոնդրէգացիային (Sant Officio) Վանուտելի կարգինալի նախագահութեամբ, վերջացաւ յօդուա որբազան Կօնի և այժմս նրա թեմի քահանաների դէմ գատ է սկսուած զբարարութեան պատճառով: Երկրորդ գործը պարզեց, որ Կօնը շատ խիստ կերպով է պաշտպանել իւր իրաւունքներն ու հեղինակութիւնը և մերժելով ամենայն միջամտութիւն: անհետեանք թողնելով ամենայն միջնորդութիւն և խնդիրը, ամենայն ինչ կարգադրել է իւր ուղածի պէս, որով ժողովրդի և հոգևորականութեան զայրոյթն է առաջ բերել: Դրութեւնը սուր կերպացանք է ստացել մանաւանդ այն ժամանակ, երբ եպիսկոպոսը սկսել է միջամտել Զեխո-Գերմանական ազգային վէճերին: Սոյն գործը վարող կոնդրէգացիայի կարծիքով իշխան արքեպիսկոպոսի ներկայութիւնն այսուհետեւ Օլումուցկի թեմակալի պաշտօնում միայն կարող է աւելի սուր կերպարանք տալ ծագած թիւրիմացութիւններին:

Իւր հնազանդութեան համար, որ նա Օլումուցկի թեմը թողեց ինքնակամ, առում են, որ Կօնը՝ հէնց որ կ'ազատուի Անտիոքի, Պոլսի կամ Աղէքսանդրիայի աթոռան, իսկոյն պատրիարքի կոչում կըստանայ, իսկ այժմս մնում է Հռովմում իբրև արքեպիսկոպոս in partibus և անգամ Աստուածաշունչ ուսումնասիրող կոնդրէգացիայի:

Հետաքրքիրն այն է, որ Կօնին հեռացնելու վճռական պատճառը, ինչպէս հաւատացնում են, այն երկիւղն է եղել, որ Մօրաւիայում նրա ներկայութիւնը կարող էր ոյժ տալ Կիրիլո-Մէթոդիական շարժումներին, որը հեշտութեամբ կարող էր վերջանալ տեղացիների օրթոդոքսութեան դառնալով: Միւս կողմից էլ երկիւղ են կը ել, որ Մօրաւիայի գերմանացիների մէջ կարող է ուժեղանալ բոլորական շարժումն ու յաջողութիւն ձեռք բերել: